

ԱՆՁՆԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ և ԱՆՁԻ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Հակոբջանյան Ա.Ռ.

ք. Երևան, ԵՊՀ,

Անձի հոգեբանության ամբիոն

Նույնականության խնդրին անդրադարձն արդիական է այնքան ժամանակ, քանի դեռ առկա են աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային փոխակերպումները, որոնք էլ իրենց հերթին անդրադառնում են անձի նույնականության վրա՝ վերակառուցելով այն: Մարդու կենսագործունեության մեջ նույնականությունը ենթարկվում է փոփոխությունների և վերակառուցումների, ուստի խնդրի ուսումնասիրությունն անհրաժեշտ է դիտարկել անձի անհատական ուղու փոխակերպումների ներքո, իսկ դա նշանակում է, որ նույնականության ձևավորման և դրսևորման առանձնահատկությունները անհրաժեշտ է հասկանալ մարդու կենսագործունեության թե՛ մակրո և թե՛ միկրոմակարդակում: [4, c. 498]

Մեր ուսումնասիրությունն ուղղված է նույնականության ձևավորման և դրսևորման խնդրին, մասնավորապես, թե ինչպիսի փոխհարաբերակցության մեջ են առողջության ընկալումը՝ որպես անձի նույնականության բաղադրիչ և սուբյեկտիվ հոգեբանական տարածության զգացումը:

Նույնականության գործընթացի համար կարևոր է «հենման կետերի» առկայությունը, որոնք մարդու համար իր գոյության արտաքին ապացույցներ են հանդիսանում. մարմնի զգացողություն, անձնական տարածություն, սոցիալական միջավայր, շրջապատ: Եթե նույնականության ապրումն անընդհատ է, ապա հոգեբանական սուվերենության (հոգեբանական տարածության, սահմանների զգացողություն) ապրումը ենթադրում է դիսկրետություն և կապվածություն միջավայրի այս կամ այն օբյեկտներին: Հունանիստական հոգեբանության մեջ նշվում է նաև ինքնավարության մասին: Անձնական ինքնավարությունն իր հերթին ենթադրում է անկախություն, որոշումներ կայացնելու ընդունակություն՝ հիմնվելով ներքին աջակցության վրա: «Ինքնավարությունն առաջին հերթին անկախություն է «ինչ-որ բանից», իսկ սուվերենությունը «ինչ-որ բանի» կառավարումն է «ինչ-որ բանի» նկատմամբ»: [4, c. 161]

Ինքնության և նույնականության լույսի ներքո կարելի է նաև դիտարկել սեփականության զգացման (“*приватность*”)*, ինքնուրույնության հարցը: Այս տեսության մեջ կարևորվում են անձի և միջավայրի միջև փոխհարաբերությունները: Սուբյեկտն ընդունակ է կառուցել հոգեբանական սահմաններ՝ ձևավորելով և անհատականացնելով միջավայրի ազդեցություններն իր պահանջունքների և ազդեցությունների նկատմամբ զգայունակության համատեքստում: Սեփականության զգացումը Ա. Ջիմենելը սերտ կապի մեջ է դնում մարդկային փոխհարաբերությունների ու արժեքների ամբողջ համակարգի հետ: [2, c.18]

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել առողջության ընկալումն իբրև անձնային նույնականությունը ձևավորող հիմնարար գործոն, ինչպես նաև առողջության ընկալման և անձնային սահմանների (հոգեբանական տարածության սուվերենություն) միջև փոխհարաբերությունները:

Մենք ենթադրում ենք, որ անձնային նույնականության զարգացման համար հիմնարար է մարդու կողմից առողջության ընկալումը որպես լիարժեք և ամբողջական անձ, քանզի առողջության վրա ազդելու հոգեբանական գործոններից առաջին հերթին առանձնանում են անձնային կայուն առանձնահատկությունները: [6, p.15] Նույնականության ձևավորման և դրսևորման համար նշանակալի է նաև անձի հոգեբանական տարածությունը, քանի որ սեփականության և սուվերենության զգացումը ձևավորվում է մարդու կյանքի անհատական ուղու, սոցիալականացման ընթացքում և վերջինի արդյունքում իր կայուն տեղն է զբաղեցնում անձի կառուցվածքում [2, c. 68], ուստի և այն դիտարկվում է մեր կողմից որպես կարևորագույն գործոն նույնականության ձևավորման համար:

Մեր կողմից իրականացված հետազոտության ընտրանքն է կազմել 27-30 տարեկան 30 երիտասարդների խումբ՝ կանանց և տղամարդկանց հավասար հարաբերակցությամբ: Տարիքի ընտրությունը պայմանավորված էր տարիքային այս փուլի ճգնաժամային բնույթով՝ հիմնվելով անձի սուբյեկտայնության և սուբյեկտիվ իրականության վրա (Վ. Սլոբոդչիկով, Ե. Իսաևի կողմից տրված պարբերացում), [3, c. 196] քանի որ մեր ուսումնասիրության համար էական նշանակություն ունի մարդու անհատականացման ուղին իր նույնականության ձեռքբերման համար: Նշված պարբերացման մեջ մեր կողմից ընտրված տարիքը

* Հասկացությունը գործածվել է Ս.Կ. Նարտովա-Բոչավերի կողմից՝ ցույց տալով սուբյեկտի՝ սեփական կյանքի պայմանները կառավարելու ընդունակությունը, ընտրության հնարավորությունն ու պատասխանատվությունը դրա համար:

(27-33) անհատականացման մակարդակի ինքնակեցության իրականացման փուլում ճգնաժամային տարիքն է: [3, c. 196-197]

Կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

- «Հոգեբանական տարածության սուվերենություն» (Нартова-Бочавер, 2004):
- «Անձնային և սոցիալական նույնականություն» (Урбанович, 1998, 2001):

Ստացված տվյալների ամփոփման արդյունքում պարզ դարձավ, որ անձնային և սոցիալական նույնականության մեջ առողջության ցուցանիշը կոռելյացիոն դրական, նշանակալի կապ (դուրս է բերվել ըստ Պիրսոնի բանաձևի) ունի հոգեբանական տարածության սուվերենության հետևյալ սանդղակների հետ. ֆիզիկական մարմնի սուվերենություն ($r=0,30$, $p\leq 0,05$), սոցիալական կապերի սուվերենություն ($r=0,29$, $p\leq 0,1$) և հոգեբանական տարածության սուվերենություն (բոլոր սանդղակները միասին) ($r=0,31$, $p\leq 0,05$):

Իրականացված կոռելյացիոն վերլուծության արդյունքում կարելի է ենթադրել, որ մարդու` ինքն իրեն առողջ ընկալելն ավելի «առողջ» է դարձնում նաև հարաբերությունները, սոցիալական կապերում առավել կայուն նույնականությունը, քանի որ նշանակալի անձանց հետ կապը նպաստում է ինքնագիտակցության բարձրացմանը: Սոցիալական կապերի սուվերենության բացակայությունը բերում է կամ օտարացման կամ սիմբիոտիկ կախվածության [2, c.116], այսինքն իրեն առողջ գնահատող մարդն օտարված չէ սոցիալական կապերից և անկախ անհատականություն է: Առողջության ընկալման և ֆիզիկական մարմնի սուվերենության միջև դուրս բերված նշանակալի կապը կարող է վկայել այն մասին, որ առողջությունն առաջին հերթին ընկալվում է մարմնի ամբողջականության զգացումով, ինչն էլ իր հերթին պայմանավորված է մարմնի` ֆիզիկական սահմանների պահպանմամբ: Ֆիզիկական մարմնի սուվերենությունը հոգեբանական տարածության համար կատարում է մի շարք գործառույթներ. ինքնընդունման, աշխարհին հիմնային վստահության, սուբյեկտայնության զարգացման [2, c.107], որոնք էլ անձնային նույնականության դրսևորման ցուցանիշներ են: Ընդհանուր առմամբ, հոգեբանական տարածության սուվերենության և նույնականության կառուցվածքում առողջության ընկալման միջև կապը ցույց է տալիս, որ անձի տարածության սահմանների ամբողջականությունը, ինքնուրույնությունն ու «Ես»-ի ամբողջականությունը առաջին հերթին մարդու համար կարևորվում և նշանավորվում է իրեն առողջ, լիարժեք ընկալելու ցուցանիշով:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ անձնային նույնականության մեջ առողջության բաղադրիչի դրական գնահատմամբ է պայմանավորվում անձի

հոգեբանական տարածության սահմանները, այսինքն՝ անձնային կայուն նույնականությունը, նաև՝ հոգեբանական առողջությունը:

Գրականության ցանկ

1. Малкина-Пых И. Г.- Экстремальные ситуации.- М.: Изд-во Эксмо, 2005.- 960с.
2. Нартова-Бочавер С.К.- Человек суверенный. Психологическое исследование субъекта и его бытия. Питер, «Питер-Пресс», 2008- 400с.
3. Слободчиков В.И., Исаев Е. И.- Основы психологической антропологии. Психология развития человека: Развитие субъективной реальности в онтогенезе.- М.: Школьная Пресса, 2000.- 416с.
4. Эриксон Э.- Идентичность. Теоретическая интерлюдия.// Психология самосознания. Хрестоматия по социальной психологии личности. Редактор-составитель: Райгородский Д. Я., Самара, 2003.- С. 493-517
5. Ядов В. А.- Социальные и социально-психологические механизмы формирования идентичности личности.// Психология самосознания. Хрестоматия по социальной психологии личности. Редактор-составитель: Райгородский Д. Я., Самара, 2003.- С. 589-602
6. Handbook of Personality and Health. Edited by Margarete E. Vollrath, 2006. 350 p.

Perception of Health as a Factor for Personal Identity Formation

In the presented research personality's health is considered as an indicator and one of the categories of self-identity. The objectives of the study were to find out the relations between health and sense of psychological space of person as well as to examine the perception of health as a significant category for self-identity.

The analysis of results allowed distinguishing some evident significant correlations. The revealed correlations show that within the limits of different psychological theories and the schools considering categories of "normal", "healthy" personality's development, it is possible to find out many crossings, things in common in definition of indicators of "norms of personal development", "personal health", "psychological health".

Thus the analysis showed that individuality health as an identity indicator is connected with the sense of "self-borders" and psychological space.